armeniapeace.org

ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

2024

Armenia Peace Initiative

ԱՄՐԱՊՆԴԵԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ, ԿԵՐՏԵԼ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ

Սիրելի՛ բարեկամներ և նվիրատուներ,

Ուրախ ենք ձեզ ներկայացնել Հայաստանյան խաղաղության նախաձեռնության 2024 թվականի գործունեության արդյունքները՝ մի տարի, որը նշանավորվեց մեր ծրագրերի զգալի առաջընթացով: Մեր ջանքերը՝ աջակցելու և կրթելու Ադրբեջանին սահմանակից գյուղերի բնակիչներին, վերջերս արժանացան Մարդու իրավունքների 2024 թվականի մրցանակի «հատուկ հիշատակման», որը շնորհվել է Ֆրանսիայի Մարդու իրավունքների հարցերով ազգային խորհրդատվական հանձնաժողովի (CNCDH) կողմից: Այս տարի մրցանակը նվիրված էր «զինված հակամարտությունների պայմաններում մարդու իրավունքների պաշտպանության նախաձեռնություններին»: Այս հաշվետվությունը ներկայացնում է մեր հիմնական ձեռքբերումները և բացահայտում մեր հավակնությունները 2025 թվականի համար:

Ձեր աջակցությունը մեզ համար չափազանց կարևոր է՝ մեր աշխատանքը շարունակելու և մեր նախաձեռնությունները կյանքի կոչելու համար : Եթե ցանկանում եք նպաստել մեր գործին, խնդրում ենք սեղմել **«Նվիրաբերել»** կոճակը: Ֆրանսիայի հարկային ռեզիդենտները կարող են ստանալ հարկային արտոնություն: Դուք կստանաք CERFA հարկային անդորագիր, որի համաձայն ընկերությունները կարող են վերադարձնել նվիրաբերած գումարի 60%-ը, իսկ ֆիզիկական անձինք՝ 66%-ը:

Անհամբերությամբ սպասում ենք հաջորդ տարուն, որպեսզի նորից ձեզ հետ կիսվենք մեր հաջողություններով, որոնք հնարավոր են դարձել ձեր մեծահոգության շնորհիվ: Եկեք միասին շարունակենք մեր դերը խաղալ ավելի ապահով և խաղաղ Հայաստանի կառուցման գործում:

Շնորհավորում ենք գալիք Սուրբ Ծնունդն ու Ամանորը:

Ամենաջերմ մաղթանքներով,

Թալին Փափազյան
Հայաստանյան խաղաղության նախաձեռնության գործադիր տնօրեն

Նվիրաբերել

Մեր մասին

Հայաստանյան խաղաղության նախաձեռնությունը (API) ֆրանսիական բարեգործական հիմնադրամ է, որը գործունեություն է ծավալում նաև Հայաստանում և որի նպատակն է նպաստել Հարավային Կովկասում խաղաղության և անվտանգության ամրապնդմանը՝ տարածաշրջանի ժողովուրդների միջև բացության և երկխոսության ոգով: Որպես ապաքաղաքական և ոչ կուսակցական կազմակերպություն՝ API-ն իրականացնում է կոնկրետ քայլեր՝ ուղղված Հայաստանում մարդկային անվտանգության ամրապնդմանը:

2020 թվականին իր հիմնադրումից ի վեր API-ն իր փորձը և ռեսուրսներն ուղղել է հանրության անվտանգության ամրապնդմանը երեք հիմնական ուղղություններով.

- Հարավային Կովկասում տեղեկատվական և գիտելիքների անվտանգություն՝ որպես հանրային դիվանագիտության արդյունավետության հիմք,
- Հայաստանում թվային անվտանգություն,
- Հայաստանի ժողովրդի քաղաքացիական անվտանգություն:

Եթե առաջին ուղղությունն ունի միջազգային ընդգրկում, ապա մյուս երկու ուղղությունները իրականացվում են վայրերում, որտեղ մեր ծրագրերն ունեն կոնկրետ և անմիջական ազդեցություն բնակչության անվտանգության վրա:

Մեր ծրագրերն ուղղված են մարդկային անվտանգության մակարդակի բարձրացմանը չափելի գործողությունների միջոցով: Մենք սերտ համագործակցում ենք ֆրանսիական և հայկական պետական հաստատությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության գործընկերների հետ:

<u>Իմանալ ավելին</u>

API Armenia Peace Initiative

2024 թվականին մենք կենտրոնացրել ենք մեր ջանքերը մեր երկու հիմնական ծրագրերն ամրապնդելու ուղղությամբ: Առաջին ծրագիրը նվիրված է կիբեռանվտանգությանը, իսկ երկրորդը՝ առաջին օգնության ցուցաբերմանը: Տարբեր, բայց փոխլրացնող այս երկու ուղղությունների նպատակն է լուծել Հայաստանի բնակչության առջև ծառացած կարևոր խոցելիությունները՝ զարգացնելով անհրաժեշտ հմտություններ, որոնք կօգնեն դիմակայել իրական սպառնալիքներին:

API-ն նաև ձգտում է համագործակցել Հայաստանի, Հարավային Կովկասի հարևան երկրների և Ֆրանսիայի քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչների հետ՝ նպաստելով համերաշխության և համագործակցության ընդհանուր արժեքների վրա հիմնված գործընկերություններին:

API-ն շարունակում է իր առաքելությունը՝ կառուցելով իր ուսումնական ծրագրերը խոցելի վայրերին հնարավորինս մոտ, միևնույն ժամանակ սահմանելով համարձակ նպատակներ՝ ուղղված Ֆրանսիայի և Հայաստանի երկկողմ համագործակցությանը, եվրոպական գործընկերությանն և Հայաստանի պետական ինստիտուտների կարողությունների ամրապնդմանը : Այդպիսով մենք նպաստում ենք մարդկային և տեղեկատվական անվտանգության ամրապնդմանը՝ աջակցելով կառուցողական մտավոր միջավայրի ձևավորմանը և Հայաստանի դիմադրողականության բարձրացմանը:

Իմանալ ավելին

API Armenia Peace Initiative

Տեղեկատվական անվտանգություն

2020 թվականից ի վեր Հայաստանը զարգանում է պատմական մի միջավայրում, որը նշանավորվում է աննախադեպ մարտահրավերներով: Հաճախ գտնվելով կոնֆլիկտի սպառնալիքի ներքո և միաժամանակ ձգտելով հասնել երկարատև խաղաղության՝ Հայաստանը փորձում է ամրապնդել իր ինքնիշխանությունը՝ միաժամանակ բավարարելով իր բնակչության կենսական կարիքները՝ լինի դա անվտանգության, տնտեսության, կրթության կամ արդարադատության ոլորտում:

Նման պայմաններում հստակ, ճշգրիտ և վերլուծական տեղեկատվության հասանելիությունը, որը զերծ է որևէ կողմնակալությունից և միտված է Հայաստանի շահերի պաշտպանությանը, դառնում է խիստ անհրաժեշտ: Հետպատերազմյան բարդ իրավիճակի ըմբռնումը, որը պահանջում է պարզություն, իրատեսություն և ստեղծագործականություն, հատկապես գլոբալ փոփոխական համատեքստում, կախված է վստահելի տվյալների առկայությունից: Լրագրողների, դիվանագետների, որոշում կայացնողների և փորձագետների արդյունավետ աշխատանքը նույնպես կախված է այս տեսակի նյութերի հասանելիությունից:

API-ն, հավատարիմ մնալով իր առաքելությանը, համագործակցում է տարբեր ոլորտների ներկայացուցիչների հետ՝ ներառյալ պետական հաստատություններ, քաղաքական գործիչներ, հայկական և ադրբեջանական վերլուծական կենտրոններ, ինչպես նաև ֆրանսիացի, եվրոպացի, ամերիկացի և հայ գիտնականներ ու հումանիտար կազմակերպություններ: 2024 թվականի սեպտեմբերին մենք մասնակցեցինք Համաշխարհային հայկական գագաթնաժողովին՝ որպես անվտանգության ոլորտի առանցքային ցուցադրողներից մեկը:

Մեր դերը ռազմավարական տեղեկատվական բացերը լրացնելն է՝ նպաստելով Հարավային Կովկասի առջև կանգնած խնդիրների ավելի խորը ըմբռնմանը և վերլուծությանը:

Մենք պարբերաբար հրապարակում ենք «Débrief»՝ տարածաշրջանի հիմնական մարտահրավերների հակիրճ ամփոփագիրը, ինչպես նաև ընտրում և տարածում ենք կարևոր նորություններ մեր սոցիալական ցանցերի միջոցով (Facebook, Linkedin, X) :

Մեր ընտրած ելույթները հայկական և ֆրանսիական ԶԼՄ-ներում նպաստում է այս առաքելության իրականացմանը: Մենք տրամադրում ենք հասարակությանը հավաստի, հետազոտությունների վրա հիմնված տվյալներ՝ խուսափելով չստուգված կամ ոչ հավաստի աղբյուրներից փոխանցվող տեղեկատվությունից:

Միջազգային, ֆրանսիական և հայկական մեդիա կազմակերպությունները հաճախ դիմում են քաղաքական գիտությունների դոկտոր, զինված հակամարտությունների և հետխորհրդային պետությունների մասնագետ, Sciences Po-ի դասախոս Թալին Փափազյանին՝ փորձագիտական կարծիքներ ստանալու համար:

Թվային անվտանգություն

API-ն ներդրումներ է կատարում տեղի բնակչության հմտությունների զարգացման մեջ՝ նվազեցնելով Հայաստանի թվային խոցելիությունը կիբեռանվտանգության ուսուցման միջոցով: API-ն աջակցում է Relq-ին՝ ներառական ծրագրավորման դպրոց, որը գործում է Simplon-ի լիցենզիայի ներքո և հիմնադրվել է 2021 թվականին ֆրանսիացի ձեռնարկատեր Սիրիլ Հարփությյանի կողմից: Relq-ը անվճար ծրագրավորման ուսուցում է առաջարկում հատկապես խոցելի խմբերին՝ ներառյալ կանանց, Արցախից տեղահանված բնակչությանը և պատերազմի վետերաններին:

2024 թվականին API-ն խորացրեց իր համագործակցությունը Relq-ի հետ՝ աջակցելով կիբեռանվտանգության նոր ներածական մոդուլի ներդրմանը: 2024 թվականի ապրիլին մեր կիբեռանվտանգության փորձագետ Սեբաստիան Բարգիրջյանը, որը Ռենի Սենտ-Մալոյի համալսարանի դասախոս է, իր մասնագիտական հմտություններով աջակցեց Relq-ի ուսումնական ծրագրին՝ նպաստելով Relq-ի սոցիալական և մասնագիտական կայուն ինտեգրման գաղափարի իրագործմանը:

Նոր ներածական մոդուլը մասնակիցներին ծանոթացրեց կիբեռանվտանգության հիմունքներին՝ ընդգծելով ոլորտի արդիական խնդիրները: Այն ոչ միայն ընդլայնեց Relq-ի ուսուցման ընթացքում ձեռք բերած ծրագրավորման հմտությունները, այլև զգալիորեն բարելավեց մասնակիցների աշխատունակության հնարավորությունները՝ բավարարելով խոցելի խմբերի տնտեսական և հոգեբանական կարիքները:

2024 թվականին API-ն շարունակեց իր համագործակցությունը Հայաստանում Ֆրանսիական համալսարանի (UFAR) հետ և ստանձնեց կիբեռանվտանգության դասընթացի դասավանդումը՝ յուրաքանչյուր կիսամյակում կազմակերպելով մեկ դասընթաց: Այս ուսուցման նպատակն է բարձրացնել խոշոր ընկերություններում, բանկերում, պետական հաստատություններում և նախարարություններում աշխատող մասնագետների հմտությունները՝ տրամադրելով անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ կիբեռսպառնալիքներին արդյունավետ դիմակայելու համար:

Այս տարի դասընթացին մասնակցել է 27 անձ, որոնց ավելի քան երկու երրորդը գործող մասնագետներ են իրենց ոլորտներում, իսկ մյուս մասը՝ UFAR-ի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի ուսանողներ: Բոլոր մասնակիցները ստացան UFAR-API համատեղ հավաստագրեր, որոնք վկայում են նրանց հաջողությունն անցկացված քննությունների ընթացքում:

Դասընթացի շրջանակներում ուսուցանվել են հետևյալ թեմաները.

- Ցանցեր՝ առաջադեմ տեխնոլոգիաներ և պրակտիկա,
- Վիրտուալիզացիա՝ VirtualBox և Proxmox գործիքների կիրառություն,
- Համակարգային ադմինիստրացիա և անվտանգություն՝ կառավարման և անվտանգության ամրապնդման մեթոդներ,
- Թվային դատաբժշկություն՝ թվային հետաքննության գործիքներ,
- Pen-testing (թափանցման թեստավորում)՝ խոցելիությունների հայտնաբերման և կանխման փորձարկումներ:



Այս նախաձեռնության նպատակն է ամրապնդել Հայաստանի կիբեռանվտանգության մակարդակը՝ խորացնելով մասնագետների տեխնիկական հմտությունները և կարողությունները:

Գարնանը և աշնանը անցկացված երկու դասընթացները ներառել են ավելի քան 180 ժամ դասաժամեր, որոնք վարել են բարձր որակավորում ունեցող երկու ֆրանսիացի դասախոսներ՝

- Սեբաստիան Բարգիրջյան՝ կիբեռանվտանգության դասախոս Ռենի Սենտ-Մալոյի ինստիտուտում,
- Նիկոլա Ռենար՝ ամպային հաշվարկների ճարտարապետ Orange ընկերությունում:

Գործնական մոտեցման վրա հիմնված դասընթացները հնարավորություն են տվել մասնակիցներին աշխատել մոդելավորված միջավայրերում՝ կիրառելով այնպիսի առաջադեմ տեխնոլոգիաներ և գործիքներ, ինչպիսիք են Debian և Kali Linux օպերացիոն համակարգերը: Ուսուցման մեթոդները ներառել են կոնկրետ օրինակներ և գործնական վարժություններ, ինչը դարձրել է ուսուցումը առավել հետաքրքրաշարժ և արդյունավետ:

Ինտերակտիվ վարժությունները և կանոնավոր գնահատումները (MCQ թեստեր և գործնական աշխատանքներ) ամրապնդել են ուսուցման գործընթացը և նպաստել մասնակիցների առաջընթացի հստակ սահմանմանը:

2023 թվականին անցկացված սկզբնական փորձնական դասընթացից հետո 2024 թվականին այս ծրագրի երկու փոխլրացնող բաղադրիչների մշակմամբ API-ն հաստատվեց իր տեղը Հայաստանի թվային անվտանգության ուսուցման դերակատարի շարքում: Հավատարիմ մնալով իր սկզբունքներին՝ ուղղված մարդկային անվտանգության ապահովմանը և բարձր արժեք ունեցող փորձագիտական գիտելիքների տրամադրմանը՝ API-ն նպաստում է սոցիալական և պետական խոցելիությունների հաղթահարմանը:

API-ն շարունակաբար աջակցում է Ֆրանսիայի և Հայաստանի միջև երկկողմ հարաբերությունների ամրապնդմանը: 2025 թվականին API-ն նախատեսում է ակտիվացնել իր ջանքերը թվային անվտանգության ոլորտում՝ զարգացնելով ֆրանսիացի և հայ մասնագետների միջև ցանցային համագործակցությունը և շարունակելով մասնագիտացված ուսուցման ծրագրերը՝ ամրապնդելով այս ոլորտում գործընկերությունը:

Քաղաքացիական անվտանգություն

Հայաստանի սահմանամերձ շրջանները մնում են առավել խոցելի բնական և տեխնածին աղետների հետևանքների նկատմամբ: Քաղաքացիական բնակչության՝ այս ռիսկերին արձագանքելու պատրաստվածությունը հանդիսանում է պետությունների և հասարակությունների կայունության հիմնասյուներից մեկը: Այս ոլորտում խոցելիությունը նվազեցնելու նպատակով API-ն մշակել է քաղաքացիական անվտանգության ուսուցման հավակնոտ ծրագիր, որի մեկնարկը տրվեց 2023 թվականի դեկտեմբերին:

Փորձնական փուլի ընթացքում կազմակերպվել են առաջին օգնության դասընթացներ շրջանների խոշոր քաղաքներում, ինչպես նաև՝ սահմանամերձ շրջանների որոշ հեռավոր գյուղերում : Այս փուլից հետո սկսվեց ծրագրի կոնկրետ իրականացումը Հայաստանի հյուսիս-արևելքում՝ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերում:

2024 թվականի ապրիլին հաստատվեց ինստիտուցիոնալ համագործակցություն ՀՀ Ներքին գործերի նախարարության կազմում գործող Արտակարգ իրավիճակների կառավարման պետական ակադեմիայի (ԱԻԿՊԱ) հետ: Այս գործընկերության շրջանակում սահմանվեցին առաջնահերթ գյուղերը և մշակվեց գործողությունների պլան՝ վերապատրաստված քաղաքացիական անձանց հետագա ներգրավման և արդյունավետ աշխատանքի համար:

Այս դասընթացները տալիս են անմիջական և գործնական արդյունք՝ ձևավորելով կամավորական խմբեր, որոնք կարող են աջակցել տեղական բուժաշխատողներին կամ փրկարարներին լուրջ ճգնաժամային իրավիճակներում:

Առաջին օգնության ուսուցումը իրականացվում է ՆԱՏՕ-ի ստանդարտացված պրոտոկոլով, որը ապացուցել է իր արդյունավետությունը բազմաթիվ զոհեր ենթադրող իրավիճակներում՝ մահացության դեպքերի կանխման գործում: Այս մեթոդը ներառում է՝

- Արյունահոսության կանգնեցում,
- Պնևմոթորաքսի բուժում,
- Վիրավորների նախապատրաստում տարհանման համար:

Վերջին տասնամյակում այս պրոտոկոլը հաջողությամբ կիրառվում է Եվրոպայի քաղաքացիական ոլորտում՝ ինչպես բաց մասնագիտությունների (օրինակ՝ ռազմական լրագրողներ), այնպես էլ հատուկ ոլորտներում գործող մասնագետների (օրինակ՝ բուժքույրեր, անզգայացման մասնագետներ) համար:

2024 թվականին **Տավուշի մարզի 14 սահմանամերձ** այն **գյուղերում** (սահմանագծից 10 կմ-ից պակաս հեռավորության վրա), որոնք դասվել են առաջնահերթության 1-ին խմբում, իրականացվել են դասընթացներ՝ բնակչության թվաքանակից կախված ձևավորելով 1-ից 3 խումբ: Կազմակերպված ասընթացներին մասնակցել է **377 մարդ**, որոնցից **251-ը՝ կանայք**, իսկ **92-ը՝ բուժաշխատողներ**:

Դասընթացի ավարտին յուրաքանչյուր մասնակից ստացել է **առաջին բուժօգնության անհատական պայուսակ**, որը ներառում է դասընթացի ընթացքում օգտագործվող հիմնական սարքավորումները: 2025 թվականից սկսած մենք **առաջին բուժօգնության հավաքական պայուսակներ** կտրամադրենք նաև համայնքապետարաններին, բժշկական կենտրոններին և գյուղական դպրոցներին՝ ապահովելով անհապաղ արձագանքելու հնարավորություններ ծայրահեղ իրավիճակներում:

Կյանք փրկելու մեթոդների ուսուցման կողքին այս նախաձեռնությունը տարբերվում է նաև իր մանրակրկիտ կազմակերպվածությամբ: Կազմակերպված **23 դասընթացների** իրականացման համար հաղթահարվել է ավելի քան **10,000 կիլոմետր** ճանապարհ՝ հասնելու համար առավել հեռավոր բնակավայրերին:

2025 թվականին API-ն նախատեսում է բազմապատկել իր ջանքերը ծրագրի ընդլայնման ուղղությամբ և ավարտել այն Տավուշի մարզում: 2025 թվականի ավարտին մենք նախատեսում ենք սկսել հաջորդ փուլը՝ Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում,եթե ունենանք հավելյալ ֆինանսական ռեսուրսներ: Միևնույն ժամանակ, ծրագրում ենք սկսել վերապատրաստումները Տավուշի մարզի գյուղերում՝ նպատակ ունենալով արագացնել ուսուցման գործընթացը և բարձրացնել համայնքների դիմադրողականությունը ճգնաժամային իրավիճակներում:
Այս ծրագրի յուրաքանչյուր փուլ քաղաքացիական պաշտպանության ոլորտում պետական կարողությունների աջակցման երկարաժամկետ հայեցակարգի մաս է հանդիսանում:

Միավորելով տեխնիկական գիտելիքները, տեղական և երկկողմանի համագործակցությունները՝ API-ն վերածում է խոցելի համայնքների խնդիրները հնարավորությունների՝ ուղղված նրանց հզորացմանն ու կայուն ինքնավարության ապահովմանը: Մեր գործողությունները հոգեբանական աջակցություն են ցուցաբերում առավել խոցելի բնակիչներին՝ ցույց տալով, որ ֆրանսիական կազմակերպությունը իր տեղական ներկայացուցչության միջոցով իրական աշխատանք է կատարում համայնքներում:

Այս ուսուցողական ծրագիրը ավելի անվտանգ և ճգնաժամերին դիմակայելու ընդունակ Հայաստանի կառուցմանն աջակցելու API-ի ծրագրերի մի մասն է:

Տավուշի մարզ

- Ավարտված դասընթացներ
- Նախատեսվող դասընթացներ



Մեր գործունեությունը՝ թվերով

ԲՅՈՒՋԵ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
2024



Total €200 000

ԲՅՈՒՋԵ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
2025
կանխատեսում



Total €256 000

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
2024



Total €189 000

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
2025



Total €228 000

Նրանք աջակցում են կիբերանվտանգության մեր դասընթացին

Նրանք աջակցում են սահմանամերձ շրջաններում կազմակերպվող մեր առաջին օգնության դասընթացին

Projet soutenu par Fondation de France

H.HOVNANIAN FAMILY FOUNDATION

CHENE

AZNAVOUR FOUNDATION

Armenia Peace Initiative-ին նվիրատվություն անելով՝ Դուք գործում եք անմիջապես ի նպաստ Հայաստանի կայունության:
Բոլոր նվիրատվությունները, անկախ դրանց չափից, հնարավոր են դարձնում մեր գործունեությունը՝ ուղղված թե՛ խաղաղության խթանմանը, և թե՝ անվտանգության ամրապնդմանը:

Նվիրաբերել

Ցանկանու՞մ եք օգնել մեզ:
Մեզ համար կարևոր է ոչ միայն ֆինանսական աջակցությունը, այլև ձեր աշխատանքն ու բարի կամքը:
Ունե՞ք հմտություններ, որոնք համապատասխանում են մեր ծրագրերից որևէ մեկին:

Միացե՛ք մեզ

© Copyright, 2024, Armenia Peace Initiative • www.armeniapeace.org